Հուսիկ Արա

Վերջ

Երկնքում չկա փրկություն ինձ համար,
ես սերն եմ ավերել երկրի վրա:

Կամաց ու քիչ-քիչ գնա, լույս,
որ հեռացումիդ քայլերը զգամ հատ-հատ
և հասկանամ,
թե ինչպես են ապրում խավարի մեջ:

Երբ հեռու ես արդեն,
ես չունեմ մարմին,
չունեմ էություն
և երազ չունեմ.
անանցյալ եմ ու առանց ներկա,
ժամանակը վրիպել է ինձ:

Իմ սիրտը կիսված է,
իմ հոգին մարել է,
իմ աշխարհը կորած է՝
հիմա, երբ օտար եմ մերձավորիս:

Հեռու է իմ տունը,
խլված է իմ հողը,
նվաճված է իմ երկիրը.
ինձնից հանել են քեզ,

ու չկամ ես:

Այդպես անդարձ մի՛ գնա, արևս.
իմ գարնան ծաղիկ,
իմ ամռան շողակ,
իմ աշնան թավիշ.
դադար տուր մի տեղ,
միայն ձմռան գիշերն է,
որ թողել ես ինձ.
մրսում է կյանքս:

Իմ լույսն ես դու՝
իմ աչքերը ավերած.
ու չեմ տեսնում քեզ: